

կութեան (թեամբ) անկուրի» . այսինքն խորանդունդին վրայ նայող ժայռերէն եթէ պարել մը փրթի, ականատեսն չի կրնար ըսել ինկուս կամ կ'իկկուայ, այլ անկատարով միայն կ'իկկուար, կը զգորտկէր :

Անկատար դէմքը սիրելի թուի Հորոյի, անոր համար իւր զբաժնեքը բոլոր անկատար են :

Հ. Գ. ՆԱՀԱԳԵՏԵԱՆ

**ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐՔ
Ս. ՂԱՋԱՐՈՒՅ ԿԱՆՔԻՆ**

(Շար. տես Բազմալիզ, 1924 էջ 232)

ԺԷ.

Դ Ե Ղ Ո Ր Ա Յ Ք

Փորըրիկ հատոր մ'է այս ալ, 16 հարիւրորդամեղը մեծութեամբ, 10 հարիւրորդամեղը լայնութեամբ, և հազիւ 2 հարիւրորդամեղը թանձրութեամբ, և կը կրէ 891 թուահամարը :

Կաշեկագմ է և լաւ պահուած, թուղթը պարզ բամբակեայ. ունի 84 թերթ և 168 էջ զրութիւն, որ շեղագիր է և միէջեան :

Ձի գիտցուիք թէ երբ և ո՞ւր զրուած է այն. յայտնի է սակայն՝ որ թարգմանութիւն մ'է, ինչպէս կ'իմացուի վերնագրէն՝ որ կ'ըսէ .

Դեպորայք գրութեան պատրաստեալք ի աիկեռչէ փոսկեր կոչեկերոյ, վստե թշկերոյ սակաւ ծախիւք զամեհոյն ախտս միկեւս այսօր անթշկելիք հումարեալս :

Այլեւայլ ղեղագիրներու հաւաքածոյ մ'է, աւելի վէրքերու յատուկ, ինչպէս Յառաջարանութիւնն ալ կը մատնանշէ այս կէտը, և կը տեղեկացնէ թէ ամբողջ գործը պիտի բաղկանայ երկու Հատորէ, և թէ սաի առաջինն է նուիրուած միայն և միայն արտաքին տեսանելի հիւանդութիւններու :

*

Դրբոյկին Հեղինակուհին կամ լաւ ես՝ իմրագրուհին Տիկին փուկեթ բժիշկ մը չէ . իւր հաւաքածոյն անշուշտ բրած է իր ատենի բժիշկներու հետեղութեամբ, ինչպէս յայտնի է դասաւորուած սպեղանիներէն ու դեղերէն և ասոնց չափերէն, որոնք անցեալ դարու մէջ երեցած ֆրանսերէն կամ իտալերէն Դեղագոյցներու (Pharmacopée) պարունակածներէն բնաւ չեն տարբերը :

Թարգմանիչը՝ որուն անունը զժրախտաբար չէ յայտնի՝ ջանացած է որ ղեղեղատոմսները հայացնէ՝ կարեւորութեան սահմանին մէջ, և այս իսկ ահա կու տայ իրեն մասնաւոր արժանիք մը, ուրկէ մը ղուելով կրնանք մենք ալ թղթատել զայն, եթէ երբեք օր մը հայերէն ղեղատոմսեր շարագրելու փափաք ունենանք :

Այս աշխատութեան երկրորդ հատորը չկայ սակայն, կամ Հեղինակուհին զայն չէ պատրաստած, կամ թարգմանիչը ծամանակ չէ ունեցած թարգմանելու և կամ թարգմանած է ու կը գտնուի այլուր :

Ամէն պարագայի մէջ, ինձ այնպէս կը թուի, որ այս աշխատութեան իմրագրութիւնը հազու դարուկիսեան հոսութիւն ունի, և թարգմանութիւնն ալ հաւանաբար տեղի ունեցած է անցեալ դարուն :

Լեզուն կոկիկ զբարար է, թէև տեղ տեղ ուամկորէնով խառն :

ԺԸ.

ԲԺՇԿԱՐԱՆ ՊՈՆՏՈՍԱՏԻ ՍԱՀԱԿ ԲԺՇԿԻՆ

Ստուար հատոր մ'է ձեռագիրս, զոր նախանցեալ դարու մէջ՝ 1759ին գրի առած է՝ ՊՈՆՏՈՍԱՏԻ ՍԱՀԱԿ անուն բժիշկը, որ ապրած է ի ֆափոյ և ապա յԵրզրոյիս, ինչպէս կ'իմանանք իւր ձեռագիր Ռէշաւ տակարաններէն :

Հաստ կողքերով կաշեկագմ, լաւ պահուած հատոր մ'է, և կը կրէ՝ 1353 թուահամարը :

Մեծութիւնն է՝ 20 հարիւրորդամեղր, լայնութիւնը՝ 16,5 հարիւրորդամեղր, իսկ թանձրութիւնը 7,5 հարիւրորդամեղր: Ունի 831 էջ գրութիւն, ամփոփուած 416 թերթի մէջ: Թուղթը սովորական բամբակեայ է, գիրը նոսր՝ բայց շեղազրի մօտեցող, և ընթերցելի՝ թէև ո՛չ գեղեցիկ:

Որչափ որ ՊՈՆՏՈՍԱՍՏԻ ՍԱՀԱԿ ԲԺԻՇԿԻՆ անունը կը կրէ այս բժշկարանը, սակայն ամբողջութեամբը քաղուած է Ամիրտուլ-վաթէն, ինչպէս Սահակն ալ կը յայտնէ իր Յառաջբանն – Տեղեկութեամբ՝ որ կը կրէ՝

Բառ առ ընթերցողս

վերնագիրը, և է.

« Այս պատուական բժշկարանս, ի վա-
 « ղընջուց ժամանակաց թարգմանեցեալ
 « կայր ի յարարացոց լեզուէ ի հայ բար-
 « բառ, բայց Մձ տարվան գիրգ էր կարի
 « յոյժ հնացեալ էր, և կազմարարքն
 « խառնախուռն կազմեալ էին, և մա-
 « ճնաւանդ ոչ տան զլուս ունիւր և ո՛չ
 « ցանկ, և թէ կայր տանջուլիս, նայ ևս
 « անծանօթ բառով էր եղեալ, որպէս որ
 « ես ևս զոմանս եղի, և այս եղև, կամ
 « սխալմամբ և կամ թէ յատուկ անուանս
 « ո՛չ ունելով. վասն որոյ կարի յոյժ մե-
 « ծաւ յաշխատանօք և հազիւ կարացի
 « այսքան ժողովել ի միասին, և ցանգն
 « ի վերայ այբուբէնի եղի արհայ, այսու-
 « հետև ով որ զինչ որ կամի դերբաւ կարէ
 « գտանել և ընթերցուլ. և կամ թէ ով
 « որ կամի օրինակել, թող ի վերայ ցան-
 « զին հայէ և ի այբէն սկսէ և զրէ կարգաւ
 « մինչև ի վերջն նայ ևս գիրքն կու լինի
 « ի վերայ այբուբէնի, և յայնժամ կու
 « ուղղի գիրքն: Թէպէտ Ողորմած հօգի
 « հանգուցեալ յամասխացի Ամիրտուլվաթն
 « ի վերայ այբուբէնի է գրեր, սակայն
 « ինձ անկարելի եղև գրել, որպէս որ ի
 « վերն ասացաք. վասն որոյ աղաչեմ
 « զձեզ եղբայրք զսխալանացս իմոց ան-
 « մեղադիր լինիք, քանզի կարն իմ այս-
 « քան էր...» և այլն:

*

կ'երեւի շատ սխալագիր օրինակի մը հանդիպած է Սահակ, և շատ նեղութիւն ունեցեր է զայն կարգաւորելու համար: Եւ յիշած օրինակ՝ որ 280 տարուան հնութիւն ունի եղեր՝ անկասկած Ամիր-տուլվաթի աշխատութիւնն էր: Սահակ բժիշկ այս ընդօրինակութիւնը 1759ին կատարած ըլլալով, եթէ այդ թուականէն 280 տարի առաջ անցնինք, կ'ունենանք 1479 թիւը, որ ճիշտ Ամիրտուլվաթի ժա-մանակն է, ինչպէս Սահակ ալ լռեխայն կը յայտնէ այս թուականը, « Ողորմած ձոցի հոնգուցեալ յԱմասխացի Ամիրտու-վաթն » խօսքով:

Այս տեղեկութեան յաջորդ էջին վրայ Սահակ Պոնտոսացի կ'արձանագրէ 4 սող համեստ ոճով Յիշատակարան մը, ըսելով՝

« Գրեցաւ պատռասկան թշկարաւս յամի
 « տեասն, 1759ին /, իսկ ըստ Հայոց 1208.
 « ի մայրաքաղաքն Քաֆալս /, ձեռամբ ան-
 « կիրք և անիմաստ ամենեցուն յետեկալ /
 « ծառայ ձեր թմիչկ Սահակի, որ է Պոն-
 « տոսացի / »:

Բայց այս Յիշատակարանէն անմիջա-պէս առաջ ալ կը գրէ կարգ մը խօսքեր, որոնք բաւական հետաքրքրական են, իբրև արտայայտիչ անոր մտայնութեանը, որ կ'երեւի՝ ամէն բանէ աւելի բարոյականու-թեան վրայ հաստատուած ըլլալու էր: Ահաւասիկ ատենք.

« Ինարք ոմն ի հարանց ընդ իմաստուն
 « թիլիլի մի, և ասե. ամենայն ցարց զից
 « զիտես: Պատասխանի ևտ և ասե. .

- « Ան զարարն ապաշխարոտբան.
- « Եւ զժաղկկն եղբայրսիրոտբան.
- « Եւ զտերեկն աղբատսիրոտբան.
- « Եւ զպտոպն խոնարհոտբան,
- « Եւ յից ի հաւանն ողորմոտբան,
- « Եւ ալոյ զիերն ժաւեր ամերով,
- « Եւ քամե ի դաստատակն ազատոտբան,
- « Եւ արտատասխան ընկե ամեն մէջ

« գիշերի. այս է ամենայն ցաւոց դեղ, և « ֆրիտտուսի մարդասիրին փառք յաւի- « տեանս ամեն »:

« Փառք կենդանայն աստուծոյ որ նայ « միայն է տեր մահոս և կենաց, հեքիմն « սեպիպ ասեն խնորացս է բանս ասաց. բէ « Ճայիկոս լինէ և Գեղիահոս բագմաց վր- « կայեաց. հրաման ի վերջատս պիտի որ « օգտէ թիւկն զոված:

« Լէր իմաստուն կամ հետեոյ իմաստ- « նոց.

« Կայով ի բոց ի մարդակերպ անասնոց,
« Ձի գիտութիւնն է իմաստնոց ձառա- « գայր.

« Տրդիտութիւնն անիմաստից որոցայր »:

Քանի՜ նշանակաւից են Սահակ Պոն- տոսացիի սոյն տողերը, և որչափ յան- ձնարարելի՜ ներկայ ժամանակի բժիշկինե- բոս ասագ ուշադրութեանը: Երայրոս- րութիւնը, աղբատասիրութիւնը, խանրհո- րիւնը, ողորմութիւնը, մանաւանդ ուսում- նասիրութիւնը բժիշկի մը զլխաւոր դրամա- գլուխն ըլլալու են, առանց առանց արժանի չէ նա անդամակցելու այն մեծ բանակին, որուն վսեմ կոչումն ու նշանաբանն է՝ « օգնել տառապող մարդկութեան »:

*

Տեղեկատու և խրատատու այս էջերը արձանագրելէ յետոյ, ՍԱՀԱԿ ՊՈՆՏՈՍԱՑԻ կ'անցնի շարագրել բուն բժշկարանը, որ ինչպէս յայտնի եղաւ Յառաջաբանէն՝ Ամիրտովաթի գործերուն կարգաւորու- թիւնն է. բայց մեծագոյն մասամբ ցարձակած Անգիտաց Անկեռէն:

Սկզբնական մասի մը մէջ, նման բոլոր բժշկարաններու, կը պատմէ թէ ղեղերու օգտութիւնը ինչպէս ծագում առած է, և կ'ըսէ թէ մարդիկ փորձառութեամբ կամ երագի մէջ և կամ կենդանիներու հետեւելով նոսան ղեղերու գործածութիւնը. և շատ հետաքրքրական են այդ մասին Ամիրտովաթի գրածները, զոր Սահակ բժիշ-

կին այս ընդօրինակութեանը մէջ աւելի մեկին կը գտնենք:

Յաւալի է սակայն, որ Ամիրտովաթի հարազատ խօսքերը, որոնք ալ անշուշտ ռամկօրէն էին, չեն ճշգրութեամբ պահուած, և աղանդորուած են գլխովին՝ Սահակի գրչին տակ. բայց այսուհանդերձ՝ մեծ յիշատակութեան ու գովութեան արժանի է Պոնտացի Հայ բժիշկը, որ ունեցած է մեծ համբերութիւն խառնուած ու ցիրու- ցան օրինակէ մը դուրս հանելու կարգա-ւորուած ամբողջութիւն մը:

*

Ապա կը գրէ ղեղերուն 64 տեսակ յատկութիւնները՝ որոնք են. Լատիֆ՝ նուրբ. քարիֆ՝ լերկ. Սայիլ՝ ջրի (այսինքն հեղուկ), Ճամիտ՝ պաղի, (կարծր ըսել կ'ուզէ). Լագիձ՝ կպչուկ. Հայ՝ փշրան. մո- յատտիֆ՝ նուրբացնող. մոնայիլի՝ հալող. մուդտիհ՝ կտրող. մաֆսարբէ՝ բացող. Մուրիի՝ թուլացնող. Հայի՝ քամող. Ղաա- սայ՝ վլացնող. մոխաշիկ՝ խճորացնող. Ճուդիպ՝ քաշող. Հագիմ՝ մարսեցնող. մուե- գիձ՝ եփող. մոնաֆիֆոգ՝ քամացնող, տա- րիտրիսիան՝ քամին ցրուող. մագիլ կամ լազիլի՝ սահեցնող. մոնուսիր՝ կարմրեցնող. մահրաք՝ ըրոքել սվող. մուդտրեմ՝ խոց այնող. մոնիլոգ՝ այրող. աքքսոլ՝ ուտող. վափի՝ մորթի այրող. մուշաֆիկ՝ բորբոս- ցընող. մուքսսիֆ՝ թանձրացնող. Մուրիի՝ կակղացնող, մոնսայիպ՝ պնդացնող. մո- յատտիլի՝ թմրեցնող. մուշափաի՝ ուժովըը- նող. սամ՝ սպաննող. մուշահամ՝ բուսըը- նող. քուշիլ՝ պայծառ առնող. մոնսիլ՝ լուծիչ. Մուտիրիլպափլ՝ գոգ յորդորող. և այլն:

Եւ յետոյ կը սկսի գրել մէն մի ղեղերը այբուբենական կարգաւ, բայց տեղ տեղ շեղելով այս կանոնէն, թերեւս Ամիրտու- վաթի հաւատարիմ մնալու համար, զի սա ալ՝ հակառակ որ այբուբենական շար- ըով դասաւորած է իւր ղեղաբանութիւնը, շատ անգամ ունեցած է զարտուողութիւն- ներ:

Սահակ Պոնտոսացի իսիստ մեծ ուշա-

դրութեամբ՝ (ինչպէս դիւրին է դատել իւր այս ստուար խժշկարանէն), և նաև մեծ հողածութեամբ կը դասաւորէ Ամիրտու վաթի զորքը, մէն մի բառ լաւ կը կշռէ ու այնպէս կը ներկայացնէ, և Ամիրտու վաթի ղեկարատիրուն վրայ ալ կ'անելցնէ ուրիշ ղեկանուններ, որոնք իւր անձնական փորձառութեամբը բերուած են հոն:

*

Սահակ բժիշկ ինչպէս իւր անունէն կ'իմանանք, ծնած էր Պոնտոս, բայց իր բժշկութիւնը թերեւս ճիշտ ատեն ծննդավայրին մէջ գործադրելէ յետոյ զացած է, ո՞ր գիտէ բախտին ինչ տեսակ հալածանքին պատճառաւ, նախ փաֆա և անտի անցած է Եդոկիա, ուր գրած է նաև ուրիշ բժշկարան մը, որ է մեր այս ուսումնասիրութեան կարգին Ժիթրոզը:

ՏՈՒՅ. ՎԱԼԱՐՄ Ե. ԹՈՒԳՈՍԵԱՆ

ՎԼԿԵԼՈՒԿ — Ս. ՂԱՐԱՅ
6 Յունուար 1923

(Շարունակելի)

ՄՈՒՃԱՆԻ ԶԱՅԱՐՄԱՅԱԼ ԳԱՆԱԴՐ

(Աւստրալիան - Պարտիան ուսումնասիրութեան)

(Շար. տես Բազմ. 1924, էջ 238)

11. Հանձնարարք

Սա նոյնպէս զուտ հայաբնակ է. ընկած է Մամուքայից երկու վերտոյ հեռու, ղէպի արևմուտք, մի հովտում, որի արևմտեան կողմը փուած են արտերը, իսկ հարաւային կողմը, զիւղին կից՝ այգիները, որոնք զարդարած են մտաւորապէս 10,000 որթով:

Գիւղը 25 տարւայ պատմութիւն ունի. հիմնել է 1895 թւին Հաշի-Ալի-Ղուլի խան և Հաշի-Խոսրով խան բախտարացիների ձեռքով. նրանք Մէքքէ ուխտի են գնացել, հաշի դարձել, ապա վերադարձին շինել յիշեալ գիւղը և կոչել Հաշիարաղ, այսինքն հաշիի շինութիւն:

Գիւղը բաժանուով և երկու թաղի. առաջինը կոչուով է Բարաֆտար կամ Փէրէցոնց զալէ, որ ընկած է մի բարձրութեան վրայ և ունի 80 տուն, իսկ երկրորդը՝ գիւղ, որ փուած է մի բարձր դաշտի վրայ և բաղկացած է 51 տնից, Տները մեծամասնութեամբ շինուած են իրար կողքի, իսկ փոքր մասով կանգնած են միմեանցից հեռու: Հայերն այստեղ հաստատուել են 25 տարի առաջ. նրանցից մեծ մասը եկել են հալասիակ Ամաղաբաղ գիւղից, իսկ փոքր մասը՝ Փէրիա գաւառի Բարաղաա, Միլակերտ, Խունկ, Բոյորան և այլ գիւղերից: Այժմ 81 տուն են 39± բնակչով, որի 210ը արական և 187ը իգական. սրանից 27 տունը իօնջըլի են:

Գիւղի մէջտեղում կառուցած է Ս. Սարգիս եկեղեցին. դա փայտաշէն մի շինութիւն է, որ հիմնել է 1899 թւին, Հաշի Ալի-Ղուլի և Հաշի Խոսրով խաների նիւթական օժանդակութեամբ և ժողովրդի աշխցութեամբ: Եկեղեցին ունի զանգակատան նման մի բան, զարդարած երկու զանգակներով, որ ներքել են յիշեալ խաները:

Եկեղեցում կայ ձեռագիր մի աւետարան «Մ. Մկրտիչ» անունով. դա 500 էջից բաղկացած, կարմիր թանշէ կագովով, թղթեայ մի աւետարան է՝:

Գիւղը զպրոց չունի. գիւղացիների մեծամասնութիւնը տղէտ են. ընդամենը 13 հոգի գրագէտ կայ:

Գիւղում գոյութիւն ունին «Հ. Յ. Գ. Առիւծ» և «Աղլարտսիւսում» ընկերութիւնները: Կրանցից առաջինը հիմնել է 1919 Յունուար 2ին, պ. պ. Մինաս Գէորգեանի, Բարթողիմէոս Տէր-Սիմէօսեանի (Ներսէս ֆհնյ.), Մկրտում Ամով-Սիտեանի և Հայրապետ Սարգսեանի նախաձեռնութեամբ, որոնք իրենց նպատակ են դնում:

- Ա. Ընկերների մէջ զարթեցնել ընկերասիրութեան և հայրենասիրութեան ոգի:
- Բ. Նիւթապէս օգնել Հաշիարաղի գիւղի բացառելիք հայ դպրոցին:

Սոյն ընկերութիւնը մի հիւղն է կազմում Նոր-Չուրաղի Հ. Յ. Գ. Ենթակոմիտէի: «Աղլարտսիւսումը» սկիզբ է առել 1919 փետրուար 1ին: Հիմնադիրներն են. պ. պ. Մատթէոս

1. Բացի յիշեալ աւետարանից տ. Հնիփոմէ (Հոսոսիմայ) Ղարաբանի տանը գտնուով է «Մ. Մինաս» անունով մի թղթեայ ձեռագիր աւետարան, փայտէ կաղձով, բաղկացած է 574 էջից: Յիշեալ կիրև սրբակնաց կնակն է վարում և զուշակութիւններ անում: